



POLICY FORUM ARMENIA
Better Policies. Better Future.

Հրատապ տարածման համար
Դեկտեմբեր 12. 2012

Էլ. փոստ: forum@pf-armenia.org

Կայք: <http://www.pf-armenia.org>

Հայաստանի իշխանությունները ընտրակեղծիքներին նոր տեսք են հաղորդել

Վաշինգթոն/Լոս Անջելես/Երևան - Ընթացիկ տարվա սկզբին, միջազգային հանրության և քաղաքացիական հասարակության աճող ճնշման ներքո, 2012 թվականի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ Հայաստանի կառավարությունը քայլեր ձեռնարկեց ընտրակեղծիքները և աղավաղումները նվազեցնելու նպատակով: Այնուամենայնիվ, համաձայն ԱՄՆ-ում գործող Policy Forum Armenia (PFA) միջազգային հետազոտական կազմակերպության հատուկ զեկույցի՝ իրական ընտրական բարեփոխումները Հայաստանում կրկին խափանվեցին, պարզապես այս անգամ գոհ դառնալով ավելի հնարամիտ և լավ թաքցված կեղծարարական միջոցների:

«Հայաստանի 2012 թվականի խորհրդարանական ընտրությունները» զեկույցը խորքային վերլուծություն է պարունակում ընտրություններին նախորդած քաղաքատնտեսական և օրենսդրական զարգացումների վերաբերյալ, ինչպես նաև ամփոփում է առանցքային շահառուների՝ ընդդիմադիր կուսակցությունների, միջազգային դիտորդների, տեղական քաղաքացիական հասարակության խմբերի արձագանքները նշված ընտրությունների արդյունքների առնչությամբ:

Այս զեկույցը նման այլ զեկույցներից շահեկանորեն տարբերվում է վերլուծաբանների կողմից իրականացված վիճակագրական մի շարք թեստերով, որոնք համահունչ են շահառուների արձագանքների հետ: Այս վիճակագրական արդյունքները վկայում են շարունակական և ռազմավարական բնույթ կրող ընտրակեղծիքների մասին և բացահայտում են այս արատավոր գործնետության հիմնական շահառուին, որն է իշխող կուսակցությունը:

Մեկնաբանելով զեկույցի արդյունքները՝ Լոնդոնում գործող Արտաքին քաղաքականության կենտրոնի (Foreign Policy Centre) քաղաքականության գծով տնօրեն Ադամ Հագը նշում է. «Այս կարևոր և մանրամասն զեկույցը ցույց է տալիս, որ Հայաստանը դեռ երկար ճանապարհի պետք է անցնի ընտրությունները ազատ և արդար որակելու

համար: Մասնավորապես վիճակագրական վերլուծության արդյունքները կարծես թե ցույց են տալիս, որ ընտրությունների կազմակերպիչները հաջողությամբ կարողացել են հարմարվել օրենսդրական փոփոխություններին և արտաքին ճնշմանը (Հայաստանից արտագաղթած քաղաքացիների տվյալների ապօրինի օգտագործման և ձայների հաշվարկի ընթացքում իրականացված խախտումների միջոցով), ինչը խորապես մտահոգիչ է: Հայաստանը պետք է բարելավի ընտրական գործընթացները ապագա ընտրական արդյունքների նկատմամբ միջազգային հանրության և, որ ամենակարևորն է, Հայաստանի հասարակության վստահությունը ձեռք բերելու համար»:

PFA-ի ավագ փորձագետ Արմինե Իշխանյանը՝ Լոնդոնի տնտեսագիտական դպրոցից (London School of Economics), շարունակում է, նշելով. «Հմտորեն թաքցվող ընտրակեղծիքների միջոցների և լծակների շարունակական կատարելագործումը արտաքին դիտորդների համար դժվարեցնում են կեղծիքների կոնկրետ դրսևորման բացահայտումն ու արձանագրումը: Մա ընտրակեղծիք 2.0 է (նոր սերնդի ընտրակեղծիք): Զեկույցի հեղինակները կիրառել են հետազոտության և վերլուծության առկա բոլոր գործիքները այս ընտրակեղծիքների վրա լույս սփռելու և հանրությանը Հայաստանում ընտրակեղծարարության կենդանի և բարվոք լինելու մասին վիճակագրական հիմնավորումներ տրամադրելու համար: Կարևոր հարցը հետևյալն է. ինչպիսի՞ն են գալիք նախագահական ընտրությունների հեռանկարները»:

PFA-ի խորհրդի անդամ, լուսանցելեսաբնակ փաստաբան Էդգար Մարտիրոսյանը նշում է, որ ազատ և արդար ընտրությունները ինքնանպատակ չեն: «Ավելի լավ ընտրությունները հավանական է, որ կապահովեն ավելի լավ կառավարում և ավելի ամուր հասարակական համախմբվածություն», - պնդում է նա: «Եվ միջազգայնորեն ընդունված եզրակացություն է, որ լավ կառավարումը տնտեսական զարգացման և առաջընթացի հիմնական շարժիչ ուժն է զարգացող երկրներում, որոնց թվում է նաև Հայաստանը»:

#

PFA-ը անկախ, շահույթ չհետապնդող միավորում է, որի նպատակն է ամրապնդել Հայաստանի տնտեսական զարգացման և ազգային անվտանգության շուրջ դիսկուրսը՝ նպաստելով Հայաստանում հանրային քաղաքականության կերտմանը: PFA-ի այս և այլ զեկույցները, որոնք գնահատականներ են տալիս Հայաստանում և Սփյուռքում տեղի ունեցող առանցքային զարգացումներին, հասանելի են www.pf-armenia.org/reports հղումով: